### Պաւիերայի հսկայական արձանը :

ՊԱՒԻԵՐԱՅԻ հսկայաձեւ արձանը, որ Սայտլինկ անուամբ լերան վրայ պիտի կանգնուի, արդի արձաններուն մէջ ամենէն մեծն է : Այն մէկ կտորը ձուլարանէն իւր տեղը տանելու համար 16 ձի չի բաւեր . գլխոյն մէջ երկու հոգի հանգիստ Եւրոպացւոց ֆոլքա ըսուած պարը կրնան խաղալ . քթին մէջ ալ նուագածու մը թէ որ ուզէ կրնայ նստիլ : Բայց զգեստին թանձրութիւնը, որ մինչեւ ծնկուընները կը հասնին, 6 բթաչափ է . իսկ զգեստին վարի շրջապատը 200 մեդր է : Արձանին ձեռքն եղած յաղթութեան պսակը 100 քանթար կը կշռէ . հեղինակն է Շվանթալեր անուամբ գերմանացի երեւելի ձուլիչը :

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### Ցորենի որդերուն[1] դէմ նոր դեղ :

ԱՆԳՂԻԱՑԻ Ուիլեըմ Ճըգըլ անուամբ բնալոյծ մը մօտերս երեւելի փորձեր ըրեր է ցորենի որդերը ջարդելու համար, որոնք երկրագործութեան մեծ պատիժներէն մէկն են, եւ որ եւ իցէ կերպով մարդ չէ կրցեր բոլորովին ասոնց դէմն առնուլ : Հեղինակը կ'ըսէ թէ խել մը այս որդերէն բերել տուի իրենց բնական վիճակին մէջ, այսինքն այն հողէն ուսկից որ կը գտնան : Առաջին փորձով մը տեսայ որ, կ'ըսէ, ասոնց դէմ ամենէն զօրաւոր թոյներն ալ գործածելով՝ չի սատկեցան . մկընդեղային եւ սնդկային բաղադրութիւնները ասոնց դէմ բան մը չկրցան ընել . զանոնք այս այլ եւ այլ թիւնալից խառնուրդներուն մէջ խօթելով՝ վրանին զգալի տարբերութիւն մը չի տեսնուեցաւ, մանաւանդ թէ աւելի կենդանութիւն ցըցուցին : Ասոնցմով որ չի յաջողեցաւ նէ ծծմբային թթու ու բորակային թթու գործածեր է . եւ թէպէտ այս թթուներս վերջապէս զանոնք սպաններ են, բայց վրան շատ ժամանակ անցեր է : Դիպուածով միտքն եկեր է թէ հեղուկ անուշադրով փորձէ . եւ տեսեր է որ որդերուն վրայ շատ մեծ ազդեցութիւն ըրեր է : Ասն զի մէկէն այս անասնիկները, որ մինչեւ նոյն ատեն սաստիկ թոյներուն ու թթուներուն դէմ դրեր էին, առով կարկամեր ու ածուխ դարձեր են : Անուշադրին այս յատկութիւնս տեսնելով, մտածեց հեղինակը որ ասիկայ շատ դիւրութեամբ ու օգտակար կերպով կրնայ գործածուիլ . ուստի այս որդերով լեցուն խել մը հող առաւ ու քիչ մը կրի հետ խառնեց, վրան ալ անուշադրի աղ աւելցնելով : Այս կիրս եւ հետզհետէ գոյացած կազը, որ հեղուկ անուշադրին հետ նոյն զօրութիւնն ունին, բոլոր որդերը ջարդեցին ու գրեթէ բոլորովին ոչնչացուցին :

Թէ որ այս բանս, ինչպէս որ հեղինակը կ'ապահովցընէ, յաջողելու ըլլայ, երկրագործութեան շատ օգտակար կ'ըլլայ, առանց վնաս մը հասցընելու տընկոց աճմանը :

1 Գղ . Charançon. Իտ . Punteruoli. Տճ . Պօշպայ պիթի :

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

### Փայլածու[1] :

Աննաչափն չափմունքն Փայլածուի :— Փայլածուին ձեւը կլոր է, եւ ուրիշ մոլորակաց պէս լոյսը արեւէն կ'առնու . դիտակով վրան լուսնի պէս երեւոյթներ կը տեսնուին, բայց մարմինը ամբողջ որոշ չերեւար, այլ պըլպըլացող բոցի մը կը նմանի : Միայն Շրէօդէր աստեղաբաշխը կարող եղեր է այս մոլորակիս վրայ որոշ դիտողութիւններ ընել, եւ կը կարծէ թէ թանձր մթնո-

1 Առաջին հատուածը տես երես 255 :